ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վահե Դանիելյանի և ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ Անի Մխիթարյանի՝ Վրաստան (Թբիլիսի) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Վահե Դանիելյան և Անի Մխիթարյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Վրաստան (Թբիլիսի), 2020թ. փետրվարի 13-ից 15-ը:

Հրավիրող կողմը՝ Վրաստանի արդարադատության նախարարություն:

Գործուղման նպատակը՝ Վրաստանի արդարադատության նախարարի առաջին տեղակալ Միխեյիլ Սարջվելաձեի և ԱՆ բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ հանդիպումներ ունենալը, ինչպես նաև Վրաստանի արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող Հանրային ծառայությունների մատուցման սրահների գործունեությանը ծանոթանալը:

Քննարկված թեմաները՝ Հանդիպումների ընթացքում քննարկվել են Վրաստանում Հանրային ծառայությունների մատուցման սրահների գործունեությանը, մասնավորապես, իրավաբանական անձանց պետական գրանցման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտներում իրականացված բարեփոխումներին, այդ գործընթացում հանդիպած խոչընդոտներին ու առկա խնդիրներին, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Վրաստանի արդարադատության նախարարի առաջին տեղակալ Միխեյիլ Սարջվելաձեի և ԱՆ բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ հանդիպումներ ունենալու, ինչպես նաև Վրաստանի արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող Հանրային ծառայությունների մատուցման սրահների կամ այլ կերպ ասած Արդարադատության տների (Justice Houses) գործունեությանը ծանոթանալու և վրացական փորձը Հայաստանի Հանրապետությունում տեղայնացնելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վահե Դանիելյանը և ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ Անի Մխիթարյանը 2020թ. փետրվարի 13-ից 15-ը աշխատանքային այցով գտնվել են Վրաստանում (Թբիլիսի):

Անհրաժեշտ է նշել, որ Արդարադատության տունը պետական հաստատություն է Վրաստանում, որտեղ մեկ շենքում կենտրոնացվում են մի շարք պետական ծառայություններ: Տվյալ հաստատության մեջ են հավաքված Վրաստանի նոտարների պալատը, Հանրային ռեեստրի ազգային գործակալությունը, Ազգային արխիվը և Կատարման ազգային բյուրոն: Արդարադատության տան նպատակն է փաստաթղթերի հանձնումը և պետության բացառիկ տնօրինության տակ գտնվող սպասարկման իրականացումը: Արդարադատության տունն իր մեջ է ընդգրկում շուրջ 300 ծառայություն:

Աշխատանքային այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վահե Դանիելյանը և ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ Անի Մխիթարյանը հանդիպումներ են ունեցել Վրաստանի արդարադատության նախարարի առաջին տեղակալ Միխեյիլ Սարջվելաձեի և ԱՆ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, շրջել են Վրաստանի արդարադատության նախարարության ենթակայությամբ Թբիլիսիում գործող Հանրային ծառայությունների մատուցման սրահում՝ տեղում ծանոթանալով վերջինիս գործունեությանը և մատուցվող ծառայություններին:

Վ. Դանիելյանը և Ա.Մխիթարյանը այցելել են նաև Վրաստանի Մուխրանի համայնք, որտեղ հանդիպել են Մուխրանիի հանրային ծառայությունների մատուցման սրահի պատասխանատուների հետ:

Այցը հնարավորություն է ընձեռել տեղում ծանոթանալ հանրային ծառայությունների մատուցման ոլորտում վրացական փորձին: Այցի արդյունքներով վրացական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել արդեն իսկ ձևավորված գործընկերային և ջերմ համագործակցությունը, մասնավորապես, ջանքեր գործադրել վրացական փորձը ՀՀ-ում տեղայնացնելու ուղղությամբ:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Recoverable Signature

X

Vahe Danielyan

Signed by: DANIELYAN VAHE 2205900250

Վահե Դանիելյան

18.02.2020թ.